

ՁԵԿՈՒՅՑ

ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ
ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԱՅԼ
ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
ՆՊԱՏԱԿՈՎ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՋԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ
ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԴ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ՝
ԱՆՁԻ ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԻ
ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՂՋԱՄԻՏ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ ՄԻՋԵՎ ԸՆԿԱԾ ՊԱՏՃԱՌԱՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ԿԱՊԸ3

2. ԴԱՏԱՎՈՐԻՆԵՐԻ ԹՎԱԿԱԶՄԸ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ4

3. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ՝ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԱՅԼ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ5

4. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՎՐԱ ՀԱՄՆՈՂ ԱՆՎԵՐԱԿԱՆԳՆԵԼԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ8

5. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԻՐ ԻՍԿ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՉԵԶՈՔԱՑՆԵԼՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ10

6. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՇԻՐԱԿԻ, ՍՅՈՒՆԻՔԻ ԵՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ11

7. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ ՏԵՂԱՓՈԽԵԼ ԱՌԱՋԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ12

7.1. ՀԱՐՑԻ ԿԱՊԱԿՅՈՒԹՅԱՄԲ ԿԵՆՏՐՈՆԻ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆԸ13



8. ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
 ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ ԹԱՓՈՒՐ
 ՊԱՇՏՈՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԱՅԼ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՃԱՌԱԲԱՆՈՒԹՅԱՆ
 ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ14

9. ԲԱՐՁՐԱԳՈՒԹՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՊԵՍ
 ԴԱՏԱՎՈՐԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ՝ ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՆԴԵՊ
 ՆԵՐՔԻՆ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՆՎԱԶՄԱՆ ՊԱՏՃԱՌ 16

10. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ17



**1. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՂՋԱՄԻՏ
ԺԱՄԿԵՏՈՒՄ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ
ՄԻՋԵՎ ԸՆԿԱԾ ՊԱՏՃԱՌԱՀԵՏԵՎԱՆՔԱՅԻՆ ԿԱՊԸ**

Վերջին ժամանակներս մասնագիտական շրջանակներում իրավաբան գիտնականների, գործող փաստաբանների, զանգվածային լրատվամիջոցների կողմից պարբերաբար ահազանգներ են հնչեցվում դատական գործերի ձգձգումների և որպես արդյունք՝ գործերի ողջամիտ ժամկետում քննության սահմանադրական իրավունքի պարբերաբար խախտումների առնչությամբ:

Նշված հանգամանքը, ինչ խոսք, նախևառաջ, կարող է պայմանավորված լինել Հայաստանի Հանրապետությունում դատավորների հաստիքների թվակազմի ոչ բավարար չափով, ինչն էլ հանգեցնում է դատավորների գերծանրաբեռնվածության, արդյունքում՝ գործերի քննության ժամկետների ձգձգմանը: Մասնավորապես, շատ է վկայակոչվել այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում բնակչություն-դատավորների թվակազմի հարաբերակցությունը մի քանի անգամ ցածր է, քան միջազգային պրակտիկայում ընդունված միջին վիճակագրական ցուցանիշները:

Դատական գործերի քննության ձգձգումների վրա բացասաբար ազդող այս հանգամանքը կարելի է որակել որպես օբյեկտիվ՝ հաշվի առնելով այն իրողությունը, որ դատավորների թվակազմն ավելացնելը, ի թիվս այլնի, ուղղակիորեն կախված է պետության տնտեսական հնարավորություններից: Ընդ որում՝ պետք է փաստել, որ վերջին տարիների ընթացքում պետության քաղաքականությունը միտված է եղել հնարավորության սահմաններում, ըստ անհրաժեշտության, առանձին դատարաններում ավելացնել դատավորների թվակազմը: Սակայն դատական գործերի ձգձգումները, որոնք որպես հետևանք հանգեցնում են անձանց՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտումների, ունեն նաև խիստ սուբյեկտիվ պատճառներ:

Սահմանադրական հետազոտությունների կենտրոնը, ելնելով իր կանոնադրական նպատակներից, հանձն է առել վերհանել նման պատճառները: Այս



նպատակով Սահմանադրական հետազոտությունների կենտրոնը «Դատարանների ներքին և արտաքին անկախության մշտադիտարկման» ծրագրի շրջանակներում ուսումնասիրության է ենթարկել 2022-2024 թվականներին Բարձրագույն դատական խորհրդի (այսուհետ նաև՝ ԲԴԽ) կողմից ընդունված՝ առաջին աստիճանի դատարանի դատավորներին՝ այլ դատարանի դատավորի հաստիքում նշանակելու նպատակով ՀՀ նախագահին թեկնածությունն առաջարկելու վերաբերյալ որոշումները և դրանց հնարավոր ազդեցությունը գործերի ողջամիտ ժամկետում քննության իրավունքի իրացման վրա:

2. ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹՎԱԿԱԶՄԸ. ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ՀՀ Դատական օրենսգիրք ՀՀ սահմանադրական օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործում են առաջին աստիճանի դատարանի առնվազն 201 դատավոր, որոնցից 150-ն ընդհանուր իրավասության, 51-ը՝ մասնագիտացված դատարանների դատավոր:

Իրականում, առանձին մարզերում և Երևան քաղաքում տարբեր ժամանակահատվածներում ելնելով անհրաժեշտությունից՝ Բարձրագույն դատական խորհուրդը, օրենքով սահմանված կարգով, սահմանում է օրենքով նախատեսված նվազագույնից մի քանիսով ավելի դատավորների հաստիքներ, սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարբեր ժամանակահատվածներում տարբեր դատարաններում որոշակի ժամկետով դատավորների հաստիքներ թափուր են մնում, սույն վերլուծության համար որպես հիմք է ընդունվում առաջին աստիճանի դատարանների դատավորների՝ օրենքով սահմանված հաստիքների նվազագույն քանակը:

Սույն ուսումնասիրության շրջանակներում, առանձին դեպքերում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատական իշխանության պաշտոնական կայքէջում գործող դատավորների անձնական էջերի մեծամասնությունում տեղեկատվությունն ամբողջական և/կամ հստակ չէ (օրինակ՝ նշված է միայն նշանակման տարին), առանձին



դեպքերում տվյալ պաշտոնում դատավորի պաշտոնավարման ժամկետները հաշվարկվել են մոտավոր՝ ամիսները կլորացնելով տարիների, իսկ առանձին դեպքերում՝ դատավորի պաշտոնավարման ժամկետի օրերը կլորացվել են ամբողջական ամիսների:

3. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ՝ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԱՅԼ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին երեք՝ 2022-2024թթ. տարիների ընթացքում, ԲԴԽ կողմից առաջին աստիճանի դատավորներին՝ այլ դատարանի դատավորի հատիքում նշանակելու նպատակով թեկնածություն առաջարկելու վերաբերյալ որոշումների (այսուհետ նաև՝ տեղափոխելու կամ նշանակելու առաջարկի վերաբերյալ որոշումներ) ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ

- Նշված ժամանակաշրջանում ընդհանուր իրավասության դատարանի դատավորների առնչությամբ կայացվել են **53 անձի վերաբերյալ 57 տեղափոխման առաջարկի մասին որոշումներ**, որոնք չեն ներառում դատավորների առաջխաղացման մասին առաջարկների որոշումները: **Ընդ որում՝ 4 դատավոր կրկնակի են տեղափոխվել (ըստ այդմ՝ ԲԴԽ կողմից կայացվել են դատավորներին կրկնակի տեղափոխելու առաջարկներ):**

Արդյունքում, ստացվում է, որ տեղափոխման առաջարկի մասին որոշում է կայացվել առաջին աստիճանի ընդհանուր իրավասության գործու դատավորներից մոտ 38%-ի վերաբերյալ՝ չհաշվա՛ն առաջխաղացման ենթարկված դատավորներին:

- Նշված 57 դեպքերից 21-ի դեպքում դատավորները նույն հաստիքում պաշտոնավարել են նվազագույնը 0.5 ամիս, առավելագույնը՝ 12 ամիս:
Արդյունքում, ստացվում է, որ ՀՀ գործող ընդհանուր իրավասության առնվազն 150 դատավորից մոտ 14%-ը մեկ պաշտոնում պաշտոնավարել են առավելագույնը 12 ամիս:
- Նշված ժամանակաշրջանում ուսումնասիրված 57 տեղափոխման առաջարկի մասին որոշումների 32-ը՝ 56%-ը, վերաբերվում են **Շիրակի, Սյունիքի և Գեղարքունիքի** մարզերին:
Մասնավորապես, նշված որոշումների կենսագործման արդյունքում.

- 13 որոշումներով այլ դատարան տեղափոխվել են **Շիրակի** մարզի,
- 12 որոշումներով՝ **Սյունիքի** մարզի,
- 7 որոշումներով՝ **Գեղարքունիքի** մարզի դատարանի դատավորները:

Հարկ է նկատել, որ ներկա պահին.

Շիրակի մարզի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանը գործում է 13 դատավորի կազմով,

Սյունիքի մարզի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանը 9 դատավորի կազմով,



Գեղարքունիքի մարզի առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարանը **9** դատավորի կազմով:

Ուսումնասիրելով դատական իշխանության պաշտոնական կայքէջում գետեղված տեղեկատվությունը՝ արձանագրում ենք, որ նշված՝ առավել խնդրահարույց երեք մարզերում, պատկերը հետևյալն է.

- Շիրակի մարզի առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարանում ներկա պահին պաշտոնավարող 13 դատավորից 10-ը, այսինքն՝ 77%-ը նույն հաստիքում աշխատում են միջինը 16 ամիս:

- Սյունիքի մարզի առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարանում ներկա պահին պաշտոնավարող 11 դատավորից 8-ը, 75%-ը նույն հաստիքում աշխատում են միջինը 10 ամիս:

- Գեղարքունիքի մարզի առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարանում ներկա պահին պաշտոնավարող 9 դատավորից 5-ը, 55%-ը նույն հաստիքում աշխատում են 18 ամիս:

4. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՎՐԱ ՀԱՄԱՆՈՂ ԱՆՎԵՐԱԿԱՆԳՆԵԼԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Բարձրագույն դատական խորհրդի կողմից իր լիազորությունների շրջանակներում իրականացվող նման քաղաքականության հետևանքով, ի մասնավորի՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորներին՝ այլ դատարաններ տեղափոխելու առաջարկությունների վերաբերյալ որոշումների կենսագործման արդյունքում, ակնհայտորեն վատթարացրել է առանց այդ էլ ոչ բարվոք վիճակում գտնվող դատական գործերի ողջամիտ ժամկետում քննության վիճակագրությունը:

Մասնավորապես՝ մտահոգիչ է այն հանգամանքը, որ առանձին մարզերում, առանձին դատավորների պաշտոնավարման ժամկետները տատանվում են 0,5 ամսից- 1.5 տարի ժամկետների միջև:

Չնայած այն հանգամանքի, որ ԲԴԽ կողմից մշակվել և հրապարակվել է դատական գործերի քննության միջին տևողության ուղենիշային ժամկետներ՝ ըստ գործերի առանձին տեսակների և բարդությունների, այնուամենայնիվ, գործնականում միջին և ավելի բարդության աստիճան ունեցող գործերը քննվում են նշված ժամկետներից շեղումներով, ընդ որում՝ ոչ պակաս դեպքեր են կազմում այն գործերը, որոնք քննվում են այդ միջինացված ժամկետներից էական շեղումներով՝ ավարտվելով միջինում 2 տարում (նշված ժամանակահատվածը խիստ միջինացված է): Ասվածը, երբ համադրվում է Հայաստանի երեք՝ **Շիրակի, Սյունիքի և Գեղարքունիքի** մարզերում¹ ԲԴԽ վարած քաղաքականության հետ, որտեղ, ըստ վիճակագրական տվյալների, առավել հաճախ են «թարմացվում» դատարանների կազմերը՝ գործերի ողջամիտ ժամկետում քննության խնդիրը դառնում է խիստ սուր:

¹ Հարկ է նաև նկատել, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում, ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների, նշված երեք մարզի բնակչությունը միասին կազմում է շուրջ 600.000 անձ, այսինքն՝ նշված մարզերի դատարանները տեսականորեն կոչված են սպասարկելու **առնվազն 600.000** բնակչի:



Ներկա պահին նշված դատարաններում պաշտոնավարող դատավորների համապատասխանաբար՝ **77%, 75%, 55%-ը** տվյալ հաստիքներում պաշտոնավարման տևողությունը **միջինում 1 տարի է**, այսինքն՝ նրանք նոր են նշանակվել տվյալ պաշտոններում՝ **փոխարինելով նախկինում այդ մարզերից՝ այլ մարզեր տեղափոխված դատավորներին:**

Ընդ որում՝ նշված մարզերում նշանակվող դատավորների հիմնական մասը, որպես կանոն, նորանշանակ դատավորներ են: Ակնհայտ է, որ եթե դատավորը նույն հաստիքում պաշտոնավարում է ավելի քիչ, քան 2 տարի, ապա նրա կողմից քննվող և չավարտված, այնուհետև նոր դատավորներին վերամակագրվելու արդյունքում, գործի քննությունը լրացուցիչ կերպով ձգձգվելու է: Եթե այս հանգամանքին ավելանում է նաև այն իրողությունը, որ առանձին կոնկրետ մարզի դատարանում տեղափոխված (ընդ որում՝ այս գործընթացը ցիկլային բնույթ ունի) դատավորների քանակը կազմում է ամբողջ դատարանի օրինակ՝ **77 տոկոսը**, ակնհայտ է, որ տվյալ մարզում, ընդհանուր առմամբ, վտանգվում է ամբողջ մարզի տարածքում դատական գործերի ողջամիտ ժամկետում քննության սահմանադրական պահանջի իրականացումը²:

Վերջին հանգամանքը որևէ կերպ չի կարելի բնորոշել որպես օբյեկտիվ՝ պայմանավորված տնտեսական, օրենսդրության անկատարության կամ այլ գործոններով. այն ԲԴԽ կողմից վարած քաղաքականության ուղղակի արդյունքն է:

Տեսականորեն չի բացառվում այնպիսի իրավիճակ, որ նշված մարզերում տարեկան մուտք գործած և տվյալ մարզի դատավորներից համապատասխանաբար **77%, 75%, 55%-ին** մակագրված գործերի (հատկապես՝ միջին բարդության և բարդ գործերի) ողջամիտ ժամկետում քննվելու հավանականությունը պարբերաբար մեծապես վտանգվում է: **Այդ վտանգներն ակնառու են:**

² Առանձին դեպքերով, մասնավորապես՝ Շիրակի մարզի առնչությամբ, այս մասին բազմիցս բարձրաձայնվել և ահագանգվել է ինչպես զանգվածային լրատվության միջոցներով, այնպես էլ մարզի փաստաբանական համայնքի կողմից:



**5. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԻՐ ԻՍԿ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԲԱՑԱՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՉԵԶՈՔԱՑՆԵԼՈՒՆ ՈՒՂՂՎԱԾ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Նախորդ ենթագլխում նշված ակնառու վտանգները նկատվում են նաև ԲԴԽ-ի կողմից, որը հենց իր իսկ տեղափոխումների քաղաքականության արդյունքում առաջացող գործերի ողջամիտ ժամկետում քննության խնդրի լուծման համար էլ բազմաթիվ դեպքերում սկսում է կայացնել դրան հակազդելուն ուղղված որոշումներ:

Մասնավորապես՝ հենց Բարձրագույն դատական խորհրդը, վկայակոչելով ողջամիտ ժամկետում գործերի քննությունն իրականացնելու անհրաժեշտությունը, շատ դեպքերում որոշում է կայացրել որոշակի կարճ ժամկետով **հետ գործուղել տեղափոխված դատավորին, որպեսզի նա ավարտին հասցնի իր վարույթում գտնվող գործերը:** Սակայն, դատավորներին այլ դատարան գործուղելու իրավական հիմքը ՀՀ դատական օրենսգիրք ՀՀ սահմանադրական օրենքում սահմանվում է, դատավորների թվի **օբյեկտիվորեն** առաջացած անբավարարության հետևանքով որևէ դատարանի բնականոն գործունեությունն ապահովվելու անկարողությունն է (ՀՀ դատ.օր 56-րդ հոդվ. 5-րդ մաս): Այսինքն՝ օրենսդրական կարգավորումն այնպիսին է, որ գործուղումների համար անհրաժեշտ նախադրյալ է դատավորների թվի «օբյեկտիվորեն» առաջացող անբավարարությունը, այլ կերպ, գործուղումների մասին որոշումներ կարող են կայացվել, երբ **օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված՝ է ծագում** դատավորների թվի անբավարարությունը:

Մինչդեռ, գործնականում ստացվում է հակառակը. մի կողմից՝ Բարձրագույն դատական խորհրդի առաջարկով (ՀՀ նախագահի համապատասխան հրամանագրերով) իրականացնում են դատավորների մի մարզից մյուսը (կամ Երևան) պարբերական, մեծաթիվ տեղափոխումներ՝ այդպիսով առաջացնելով գործերի ողջամիտ ժամկետում քննության վտանգ (և ծագում է/կարող է ծագել սուբյեկտիվ գործոնով պայմանավորված դատավորների թվակազմի անբավարարություն), մյուս կողմից՝ ԲԴԽ-ն իր իսկ կողմից ստեղծած այդ վտանգը չեզոքացնելու համար՝ օգտագործում է օրենսդրական, իր



բնույթով՝ ոչ օրդինար, որպես կանոն, ծայրահեղ դեպքերում օգտագործվելիք և «օբյեկտիվ» հանգամանքների համար անհրաժեշտ «գործիքը»՝ դատավորների գործողումների գործիքակազմը՝ հարթելու և/կամ նվազեցնելու ողջամիտ ժամկետում գործերի քննության վտանգները: Ընդ որում՝ խնդրո առարկա ժամանակահատվածում, նման գործողումների մասին որոշումներ կայացվել են տեղափոխված դատավորներից 24-ի դեպքում:

Մյուս կողմից, սակայն, այդ ոչ օրդինար «գործիքի» կիրարկումն անգամ, իր հերթին, ԲԴԽ քաղաքականության արդյունքում ծագող գործերի ողջամիտ ժամկետում քննության իրավունքի ապահովման արդյունավետ միջոց չի կարող հանդիսանալ:

Ավելին, դատավորների գործողումների մասին ԲԴԽ որոշումների ուսումնասիրությունը վկայում է, որ միջինում գործողումը տևում է 1-3 ամիս: Այդ ժամանակահատվածի տևողությունն ինքնին բավարար է եզրահանգելու, որ դժվար թե նման կարճ ժամանակահատվածում նշված դատավորներին հաջողվի ավարտին հասցնել իրենց վարույթում գտնված բոլոր գործերը:

6. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՇԻՐԱԿԻ, ՍՅՈՒՆԻՔԻ ԵՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԵՐՈՒՄ

ԲԴԽ քաղաքականությունը քննարկվող երեք մարզերում նշանակված դատավորներին պարբերաբար տեղափոխելու այլ մարզեր (և/կամ Երևան) հանգեցնում է մեկ այլ ոչ պակաս կարևոր խնդրի, ինչը պայմանականորեն կարելի է բնորոշել իբրև «նոր նշանակված դատավորների ստիգմատիզացիա՝ ըստ մարզերի» կամ հակառակը «ՀՀ որոշ մարզերի (Շիրակի, Սյունիքի և Գեղարքունիքի) ստիգմատիզացում՝ ըստ դատավորների նոր նշանակվածության (դատավորական փորձ չունենալու) հանգամանքի»:

Նշված երեք մարզերում նշանակվող և/կամ այս պահին պաշտոնավորող դատավորները, եզակի բացառություններով, նորանշանակ դատավորներ են:



Այլ կերպ՝ համաձայն վերջին տարիներին վարվող ԲԴԽ կադրային քաղաքականության՝ դատավորների թեկնածուների ցուցակներում ընդգրկված դատավորները հիմնականում առաջին անգամ պաշտոնում նշանակվում են մարզային և, հատկապես՝ նշված մարզերի դատարաններում, այնուհետև 0-2 տարի պաշտոնավարումից հետո ստանում են ,այսպես կոչված, տարածքային «առաջխաղացում»:

Վկայակոչված հանգամանքները խիստ մտահոգիչ և խնդրահարույց են նշված մարզերում դատական իշխանության շահառու հանդիսացող անձանց իրավունքների տեսանկյունից քանի որ.

ա) պարբերաբար խախտվում է նշված անձանց՝ ողջամիտ ժամկետում գործերի քննության սահմանադրական իրավունքը,

բ) տարբերակված/խտրական մոտեցում է ցուցաբերվում մարզային բնակիչների և, օրինակ՝ մայրաքաղաքի բնակիչների նկատմամբ, քանի որ, հատկապես, մեր կողմից մատնանշված մարզերում դատական գործերի գերակշիռ մասի քննությունն իրականացնում են նորանշանակ դատավորները, որոնք մասնագիտական փորձ ձեռք բերելով, լքում են տվյալ մարզերի դատարանները, մինչդեռ մայրաքաղաքում նույն գործառույթներն իրականացնում են հիմնականում դատավորի պաշտոնում բազմամյա աշխատանքային փորձ ունեցող մասնագետները:

7. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ ՏԵՂԱՓՈԽԵԼ ԱՌԱՋԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Առանձնահատուկ պետք է նկատել, որ ԲԴԽ կողմից ընդունված՝ դատավորներին տեղափոխել առաջարկելու որոշումները երբեմն կողմնակի դիտորդների մոտ կարող են տարաբնույթ ենթադրություններ առաջացնել, քանի որ առաջին հայացքից չունեն որևէ ողջամիտ հիմնավորումներ: Օրինակ, որևէ կերպ հնարավոր չէ կռահել, թե ինչ ողջամիտ, տրամաբանական և իրավական հիմնավորում կարող է ընկած լինել դատավորին մեկ մարզում նշանակելու և տառացիորեն մեկ ամիս անց այլ մարզի դատարան



տեղափոխելու մասին որոշման հիմքում, կամ օրենքով սահմանված պաշտոնավարման տարիքը լրանալուց մի քանի ամիս առաջ դատավորին այլ դատարան տեղափոխելու և այնուհետև՝ նախորդ աշխատավայր գործուղելու մասին ԲԴԽ որոշումները: Երրորդ դեպքում՝ հարցին, թե ինչու է Երևան քաղաքում մի քանի ամիս պաշտոնավարելուց հետո դատավորը ցանկություն հայտնել տեղափոխվել Կոտայքի մարզի դատարան, պատասխան է տրվում, որ դրա հիմքում Ծաղկաձոր քաղաքում եկամտահարկի հետվերադարձի մասին օրենքի կիրառմամբ բնակարան գնելու դատավորի ցանկությունն է:

7.1. ՀԱՐՅԻ ԿԱՂԱԿՅՈՒԹՅԱՄԲ ԿԵՆՏՐՈՆԻ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆԸ

Այս համատեքստում, Կենտրոնը, ընդգծելով,

- **որ 2022-2024 թվականներին Բարձրագույն դատական խորհրդի կողմից ընդունված՝ առաջին ատյանի դատարանի դատավորներին՝ այլ դատարանի դատավորի թափուր հաստիքում նշանակելու նպատակով թեկնածություն առաջարկելու վերաբերյալ որոշումները կայացվել են Բարձրագույն դատական խորհրդի կողմից Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված լիազորության իրականացման շրջանակներում,**

ահագանգում է,

- **որ այդ որոշումներում բացակայում է պատճառաբանությունը՝ ինչը, որպես հետևանք, վտանգում է դատավորների նշանակման (տեղափոխման) գործընթացի թափանցիկությունն ու հանրային հաշվետվողականությունը, հանգեցնում (կարող է հանգեցնել) այն մտայնության, որ դատավորների նմանատիպ նշանակումները (տեղափոխությունները) պայմանավորված են ոչ թե օբյեկտիվ գործոններով և հանրային շահով, այլ՝ կամայական մոտեցումներով, նեղ անձնային շահերով:**



**8. ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻ ԹԱՓՈՒՐ
ՊԱՇՏՈՆՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԱՅԼ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐԻՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՃԱՌԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

ԲԴԽ՝ դատավորներին նշանակելու (տեղափոխելու) որոշումների պատճառաբանվածության բացակայությունը գրկում է սահմանադրական մեկ այլ մարմնի՝ ՀՀ նախագահին իր՝ Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված լիազորության արդյունավետ իրականացման հնարավորությունից: Մասնավորապես՝ Սահմանադրության նշված դրույթի ուժով ՀՀ նախագահն ունի առաջին աստիճանի դատարանի դատավորին նշանակելու վերաբերյալ համապատասխան ակտը՝ առաջարկությունը ԲԴԽ իր առարկություններով վերադարձնելու, իսկ առարկությունները չընդունվելու դեպքում, նաև՝ ՀՀ սահմանադրական դատարան դիմելու լիազորություն:

- Սակայն, որպեսզի ՀՀ նախագահը կարողանա որոշում կայացնել առարկելու և/կամ Սահմանադրական դատարան դիմելու հարցում, վերջինս, նախևառաջ, պետք է ծանոթ լինի կոնկրետ դատավորին նշանակելու (տեղափոխման) նպատակով թեկնածություն առաջարկելու վերաբերյալ որոշման պատճառաբանություններին: Ըստ այդմ՝ ի թիվս այլնի նաև, ՀՀ նախագահի նշված լիազորության արդյունավետ իրականացմանն է թղթակցում ԲԴԽ-ի կողմից նշված որոշումները պատճառաբանելու պարտականությունը: Եվ հակառակը՝ դատավորին նշանակելու (տեղափոխման) նպատակով թեկնածություն առաջարկելու վերաբերյալ որոշման պատճառաբանվածության իսպառ բացակայությունը (ինչը տեղ է գտել կոնկրետ դեպքերում), գրեթե զրոյացնելով ՀՀ նախագահի նշված լիազորության իրականացումը արդյունավետությունը,



հանգեցնում է դատավորին նշանակելու (տեղափոխելու) գործընթացում ՀՀ նախագահի զսպող և հակակշռող դերի հիմնովին շրջանցման:

Հարցի վերաբերյալ առանցքային կարևորության դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ սահմանադրական դատարանը՝ ուղիղ ընդգծելով, որ. «(...) Խորհրդի՝ Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 2-4-րդ կետերով նախատեսված լիազորություններն իրականացնելիս կայացվող որոշումների պատճառաբանվածության պահանջն առանձնակի կարևորվում է այդ որոշումների բողոքարկման սահմանափակման պայմաններում: Հիշյալ սահմանադրական լիազորությունների իրականացմամբ որոշումներ կայացնելիս Խորհուրդը, անշուշտ, պետք է ունենա համապատասխան որոշման պատճառաբանության խորությունը և ծավալը որոշելու հայեցողություն, որը, սակայն պետք է իրականացվի դատավորների մասնագիտական առաջխաղացման և դրա վրա ազդող որոշումների համար հիմք ծառայող չափորոշիչների հիման վրա: Նշվածը կնպաստի դատավորների(...)նշանակման/ընտրության գործընթացներում հանրային հաշվետվողականության ապահովմանը և կամայականությունների բացառմանը:

(...) Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Խորհրդի հիշյալ որոշումների պատճառաբանվածությունը Հանրապետության նախագահի համար Խորհրդի որոշման առնչությամբ Սահմանադրական դատարան դիմելու և նման դիմումի անհրաժեշտության գնահատականի համար հիմք է (տես՝ mutatis mutandis, 2022 թվականի փետրվարի 1-ի ՍԴՈ-1628 որոշում, կետ 5.3)» (ՍԴՈ-1691):



**9. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՊԵՍ
ԴՍԱՎՈՐԱԿԱՆ ՀԱՄԱՑՆՔԻ՝ ԴՍԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՆԴԵՊ
ՆԵՐՔԻՆ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՆՎԱԶՄԱՆ ՊԱՏՃԱՌ**

ԲԴԽ նման քաղաքականությունն ու դատավորների «տեղափոխման» նման գործելաոճը՝ առաջին ատյանի դատարանների դատավորներին նշանակելու (տեղափոխելու) նպատակով թեկնածություն առաջարկելու վերաբերյալ որոշումների պատճառաբանվածության բացակայությունը, իր հերթին, խնդրահարույց է ոչ միայն դատական իշխանության նկատմամբ հանրային վստահության համատեքստում, այլ նաև հենց դատական իշխանության ներսում՝ «ներքին» դատավորական համայնքի և/կամ դատավորի թեկնածուների շրջանակներում՝ ընդհանուր համակարգի ներքին վստահության և ներքին անկախության ամրապնդման/խարխլման առումով:

Որոշ դեպքերում Բարձրագույն դատական խորհրդի՝ դատավորների «տեղափոխման» այդ գործընթացի **թափանցիկության** ու նշված որոշումների պատճառաբանության բացակայությամբ պայմանավորված՝ **հստակ տրամաբանության անորոշությունը**, կարող է հանգեցնել դատավորի նշանակման օրենքով սահմանված կարգի, ըստ էության, խեղման:

Այսպես, դատավորների այն թեկնածուները, որոնք օրենքով սահմանված կարգով պետք է նշանակվեին դատավոր, օրինակ՝ Երևանում (քանի որ հենց մայրաքաղաքում էր առաջանալու առաջին ատյանի դատավորի թափուր պաշտոնը), ԲԴԽ նման չպատճառաբանված «տեղափոխությունների» առաջարկությունների կենսագործմամբ՝ կնշանակվեն այլ տարածքում (մարզում), քանի որ դատավորի թափուր պաշտոնը կառաջանա ոչ թե Երևանում, այլ, օրինակ, Սյունիքի մարզում:

Նման գործելաոճի զարգացումը հղի է, այսպես կոչված, ԲԴԽ «լոյալ» և «ոչ լոյալ» դատավորական անհանդուրժելի բաժանումների՝ դատավորական համայնքի ներսում, ըստ այդմ՝ իսպառ մերժելի է:



10. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Վերոբերյալ վերլուծության հիման վրա կարելի է անել որոշակի եզրահանգումներ, որ.

- ✓ Բարձրագույն դատական խորհրդի կողմից վարվող քաղաքականության հետևանքով ընդունված որոշումների արդյունքում էլ ավելի է վատթարանում Հայաստանի Հանրապետությունում քննվող դատական գործերի ողջամիտ ժամկետում քննության սահմանադրական պահանջի կենսագործման վիճակագրությունը:
- ✓ Իր իսկ կողմից վարած «դատավորների տեղափոխումների» քաղաքականության հետևանքով ԲԴԽ-ն որոշ դեպքերում առաջացնում է կոնկրետ դատարանների **բնականոն գործունեությունն ապահովելու խնդիր**:
- ✓ Իր իսկ առաջացրած խնդիրը լուծելու համար ԲԴԽ-ն օգտագործում է օրենսդրական ոչ օրդինար դեպքերի համար նախատեսված միջոցը՝ գործուղելով դատավորներին այլ դատարաններ՝ իր հերթին, առաջացնելով ՀՀ Դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի՝ գործուղումների համար հիմք հանդիսացող դրույթի խեղաթյուրված կիրառում. գործուղումները հնարավոր են միայն դատավորների թվի **օբյեկտիվորեն** առաջացած անբավարարության հետևանքով՝ դատարանի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով, իսկ դատավորների «տեղափոխման» (առաջարկների կենսագործման) ԲԴԽ քաղաքականության հետևանքով դատարաններում առաջացած դատավորների թվի անբավարարությունը չի կարող գնահատվել իբրև «օբյեկտիվորեն առաջացած»:
- ✓ Դատավորներին այլ դատարանի թափուր պաշտոնին նշանակելու (տեղափոխելու) առաջարկի վերաբերյալ ԲԴԽ որոշումները, որպես կանոն, պատճառաբանված չեն, ինչը, իր հերթին, խնդիր է ստեղծում ՀՀ նախագահի՝ հակակշռող և զսպող դերի կենսագործման և Նախագահի



լիազորությունների արդյունավետ իրականացման համար, վտանգում դատավորների նշանակման (տեղափոխման) գործընթացի ընդհանուր թափանցիկությունը՝ բացասաբար ազդելով ինչպես դատական իշխանության նկատմամբ հանրային վստահության, այնպես էլ դատական իշխանության ներսում՝ դատավորական համայնքում՝ ներքին վստահության վրա:

